ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԹԻՎ 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի ԹԻՎ 37-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2021 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 40-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 37-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանի վերնագրի առաջին տողում և 1-ին կետում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» և «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո համապատասխանաբար լրացնել «ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» և «ներքին գործերի նախարարության» բառերը,

2) հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետում «ոստիկանության տարածքային մարմինների պետերը, նրանց տեղակալները, իսկ ոստիկանության պետի կամ տեղակալի լիազորագրի հիման վրա՝ նաև նրանց ենթակա» բառերը փոխարինել «ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա և տարածքային բաժինների պետերը, նրանց տեղակալները, իսկ բաժնի պետի կամ տեղակալի լիազորագրի հիման վրա՝ նաև նրանց ենթակա» բառերով,

3) հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետում «ոստիկանության տարածքային մարմինների պետերը, իսկ Երևան քաղաքում՝ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետը» բառերը փոխարինել «ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա տարածքային բաժինների պետերը, իսկ Երևան քաղաքում՝ Երևան քաղաքի ձերբակալվածներին պահելու վայրի պետը» բառերով,

4) հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետում «Ճանապարհային ոստիկանության բաժնի (բաժանմունքի) պետը, բաժնի (բաժանմունքի) պետի տեղակալը, ճանապարհապարեկային ծառայության ստորաբաժանումների հրամանատարները և նրանց տեղակալները, ճանապարհային ոստիկանության վարչական մասի և տարածքային ստորաբաժանումների» բառերը փոխարինել «ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության վարչական գործունեության և բողոքների քննության վարչության» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի նոյեմբերի 1-ից:

3.Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատակիցներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«31» 10. 2024թ.

ք.Երևան